

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

27. 07. 2015թ.

ք.Վանաձոր

**Մասնակցում էին՝**

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ.Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Վ.Ջաղինյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Խալաթյանը, Ն.Համբարձումյանը -մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը -մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Ա.Չատինյանը -ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

**Օրակարգում՝**

1. Անցյալ ժամանակաշրջանում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

**Հանձնարարվեց՝**

1. Մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝  
Ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել հանձնարարականների ժամկետների կատարման ընթացքը և բացատրել ուշացումները:
2. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման բաժնի պետ Հ. Պապոյանին՝  
Կատարված ուսումնասիրությունների հիման վրա 2-օրյա ժամկետում փոխմարզպետներին ներկայացնել տեղեկատվություն՝ 2015թ.-ի 6 ամսվա տվյալներով նախորդ 2 տարիների ընթացքում սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների նվազում ունեցող համայնքների վերաբերյալ:
3. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ.Հակոբյանին՝  
2-օրյա ժամկետում ճշտել և փոխմարզպետներին տրամադրել տեղեկատվություն ըստ համայնքների՝ ազոտական և այլ պարարտանյութերի ու հատկացված սերմացուի վճարների գանձման վերաբերյալ:
4. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին՝  
Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի հանրակրթական այն դպրոցների նկատմամբ, ովքեր իրենց սեփական միջոցների հաշվին կատարում են շինարարական և վերանորոգման աշխատանքներ, որպեսզի դրանք կատարվեն որակով և ավարտվեն մինչև սեպտեմբերի 1-ը:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ